*Գ. Մեղրեցոց եկեղեցի (ս. Աստվածածին). շինվել է 1838 թվականին։ Այստեղ են եղել է Հովհաննես Մկրտչի մասունքը՝ ամփոփված արծաթյա խաչի մեջ՝ 1836 թ. արձանագրությամբ.*

*Դ. Նոր թաղի եկեղեցի (ս. Յովհաննէս Մկրտիչ)։*

*Ե. Կուսանաց անապատ (ս. Աստվածածին). շինված է 1816 թվականին։*

*Զ. Հին գերեզմանատուն, ուր կան հետևյալ տապանագրերը.*

***492. «ՆԱՀԱՏԱԿ», գերեզմանաքար, գտնվում է գերեզմանատան ստորին մասում, վրան՝***

Այս է տապան Թիֆլիսեցի նահատակ Անտոնին, ՌՄԽԴ (1795)-ին։ Ես Թիֆլիսեցի Սիմոնի որդի Սարկիս այս քարս հոկացի, սէրս նահատակին։

*Հրատ. Բարխուդարեանց, 180։*

***493. ՏԱՊԱՆԱՔԱՐ, գտնվում է գերեզմանատան հարավային մասում, վրան՝***

Ցարձանիս շիրմի ամփոփեալ դնի մարմին իշխանին Խաչէն գաւառի, վեհ իշխանազնեայ Դանիէլ Բէկի Որդւոյ Մելիք-Բէկ իշխանապետի, ի տանէ Հայկազըն մեծ Ջալալ Դոլի Տեառն Արցախայ Հայոց աշխարհի, Որ Ղարապաղայ կամ Շուշւոյ նահանգ Նա սովորաբար արդ վերաձայնի. Առ սուրբ հաւատոյ սա յուսահոգի, Նահատակի աստ յամրոցիս Շուշի, Դառն տանջանօք Իբրահիմ խանի, Որ թշնամի էր խաչին Քրիստոսի. Ի ՌՄԽ (1791) կանգնեաց զայս արձան Վշտալի որդին այս նահատակի Բաղդասար արհին տէր մետրապօլիտն, Հասան Ջալալեանն արքուն հովուապետն Աղուանից երկրին. որք հանդիպիք այսմ տապանի Տուք հօրն և որդւոյն Աստուած ողորմին. ի 1851։

Ծանոթ. *Դանիել բեկին Իբրահիմ խանը մաս-մաս կտրատել էր։ Դանիել բեկի քույր Ղամար խաթունը մասերը հավաքել և ամփոփել էր գերեզմանի մեջ, որի վրա հետագայում Դանիել բեկի որդի Բաղդասար մետրոպոլիտը դրել է գերեզմանաքարը և գրել տապանագիրը։*

*Հրատ. Րաֆֆի, Խամսայի մելիքություններ, 180։ Բարխուդարեանց, 180—181։*

*Շուշվա եկեղեցիներում մինչև դարասկիզբը պահվում էին բազմաթիվ ձեռագիր մատյաններ, հավաքված Արցախի վանքերից, հիմնականում Գանձասարից՝ կարևոր հիշատակարաններով։*

## 40. ՇՈՇ ԳՅՈՒՂ

*Գյուղում կան երկու եկեղեցիներ, մեկը հյուսիսային եզրի գերեզմանատան մեջ, ուր հնում եղել են հին խաչքարեր և կենցաղային քանդակներով տապանաքարեր։ Այժմ միայն նորերն են մնացել։*

*Երկրորդ եկեղեցին գյուղամիջումն է, թաղածածկ մի շենք, անտաշ քարերով կառուցված՝ ս.Ստեփաննոս անունով, մուտքը հյուսիսից, որի ճակատաքարին կա խիստ վնասված մի արձանագրություն, որը դեռևս Բարխուդարյանցի ժամանակ դժվարընթեռնելի է եղել։*

***494. Ս. ՍՏԵՓԱՆՆՈՍԻ հյուսիսային մուտքի բարավորի վրա, կիսեղծ.***

Փոքր ծոթով ուր զա· · · հասա քև տէր. ոստրք շինեցաք զսուրբ Ամենափրկիչ եկեղեցիս յիշատակ հոգոց մերոց և ննջեցելոց. ի հայրապետութեան Աղուանից տեառն Երեմիայի · · · եւ ի մերոցս նահանգի աթոռն դույ · · տէր Գրիգորն և տէր Դաւիթ եպիսկոպոսաց։ Ես մեղաւորս տէր Դաւիթ էրեցս եղէ պասկառ.

յիշեցէք ի տէր հանդերձ :ԺԵ: (15) քահանայիւ. զտէր Առաքել քահանայն յիշեցէք ի տէր. թվ. :ՌՃԴ: (1655) էր: Յաղաւթս յիշեցէք: Տէր Յիսուս Քրիստոս Աստուած ողորմեա ննջեցելոցն:

*Հրատ. Բարխուդարեանց, 132,*

*495. ԽԱՉՔԱՐԻ բեկոր, ագուցված է եղել նույն եկեղեցու լուսամուտի մեջ. վրան՝*

թվ :ՋԷ: (1458) Ես դոչ սարկաւագ Գոյարեցի (կանգնեցի՞) խաչս Ազիզա, մաւր իմ:

*Հրատ. Բարխուդարեանց, 132, Լալայեան, Ազգ. հանդ., II, 33,*

*496. ԽԱՉՔԱՐԻ բեկոր, ագուցված է սբ. Սաեփաննոսի բեմի ճակատին, վրան եկեղեցու շինության թվականը.*

ԹՌՃ
Դ ԷՐ

Թ,վ,ի,ն, :ՌՃԴ: էր (1655):

*497. ԽԱՉՔԱՐԻ բեկոր, ագուցված նախորդի կողքին.*

ԹՌՃ

Թվ,ին, :ՌՃ: (1651):

*498. ԽԱՉՔԱՐԻ բեկոր, ագուցված է նույն եկեղեցու հյուսիսային ավանդատան մուտքի ճակատին, վրան՝*

ԹԻՆ
ՌՃԿԱ

Թի,ի,ն ՌՃԿԱ: (1712):

## 41. ԴՈՆԱՎԱՐԶ ԳՅՈՒՂ

*499. ԽԱՉՔԱՐԻ վրա, որը գտնվելիս է եղել գյուղի հյուսիսային կողմի բլրի վրա գտնվող* Աղին նահատակ *մատուռի արևելյան պատի տակ.*

Ես Սահակ կանգնեցի զխաչս:

*Հրատ. Բարխուդարեանց, 131,*

*500. ԽԱՉՔԱՐԻ վրա, Աղին նահատակի բակում՝*

Ես Աղամս Աստուծով սուրբ խաչս կանգնեցի:

*Հրատ. Բարխուդարեանց, 131,*

*501. ՈՐՄՆԱՓԱԿ խաչքար, գտնվելիս է եղել Աղին նահատակից քիչ վերև, երեք իրար կից խաչքարերից մեր՝*

Թվ[ական]ին :ՇԻ: (1071). կամաւ ամենակալին Աստուծոյ ես . . . . Գրիգոր . . Աստուծոյ միաբան եղբարքս լա . . . զխաչս իշխանութեան . . . հայրապետութեան . Ոհանէսի տէր Ներսէսի . . ո . . . աղաւթեցէք:

*Հրատ. Բարխուդարեանց, 131,*